

## Իրավունքներ, որոնց մասին հարցաքննվողին պետք է տեղեկացնեն մինչև հարցաքննության սկիզբը

### 1. Փաստաբանից կոնֆիդենցիալ խորհրդատվություն և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը

#### Ա. Փաստաբան

- Քաղաքացին իրավունք ունի փաստաբան ընտրել իր հայեցողությամբ:
- Եթե հարցաքննվողը մասնավոր փաստաբան չունի կամ վերջինս չի կարող ներկայանալ հարցաքննության, ապա հարցաքննվողը կարող է միջնորդել Փաստաբանների կոլեգիայից հերթապահ փաստաբան նշանակելու մասին:
- Որոշակի պայմաններում (հանգամանքներում) նման իրավաբանական աջակցությունը ամբողջությամբ կամ մասամբ անվճար է: Քաղաքացին իրավունք ունի պահանջել, որպեսզի իրեն տրամադրվի այն փաստաթուղթը, որում ի մի են բերված այդ պայմանները:

#### Բ. Նախնական կոնֆիդենցիալ խորհրդատվությունը

- Մինչև հաջորդ հարցաքննության սկսվելը հարցաքննվողը իրավունք ունի իր փաստաբանի հետ կոնֆիդենցիալ խորհրդատվության, որը պետք է տևի 30 րոպեից ոչ ավել և բացառության կարգով կարող է երկարացվել հարցաքննությունը վարող անձի կողմից:
- Խորհրդատվությունն անցկացվում է հեռախոսով կամ հարցաքննության վայրում:
- Եթե մասնավոր փաստաբանի հետ նախատեսված խորհրդատվությունը 2 ժամվա ընթացքում չի կայացել, ապա գոյություն ունի նշանակված հերթապահ փաստաբանի հետ կոնֆիդենցիալ խորհրդատվության հնարավորություն, ինչից հետո միայն կարող է սկսվել հարցաքննությունը:
- Հարցաքննությանը ուշացած փաստաբանին թույլատրվում է

մասնակցել հարցաքննությանը մնացած ժամանակահատվածում:

#### Գ. Իրավաբանական օգնությունը հարցաքննության ժամանակ

- Հարցաքննվողն իրավունք ունի օգտվել փաստաբանի աջակցությունից բոլոր հարցաքննությունների ժամանակ:
- Փաստաբանը պետք է ապահովի.
  - ցուցմունքներ և բացատրություններ տալուց և իր դեմ վկայություններ տալուց
  - հրաժարվելու իր պաշտպանյալի իրավունքները:
  - հարգալից վերաբերմունքը իր պաշտպանյալի հանդեպ առանց նրան ստիպելու կամ նրա հանդեպ անօրինական ճնշում գործադրելու:
  - հարցաքննության ժամանակ պաշտպանյալի տեղեկացվածությունը իր իրավունքների մասին և իրավական նորմերի պահպանումը:

Եթե այս փուլում փաստաբանի մոտ ինչ-որ նկատողություններ են հայտնվում, ապա նա իրավունք ունի դրանք անհապաղ ներառել հարցաքննության արձանագրության մեջ: Դատապաշտպանը կարող է տրվող հարցերի վերաբերյալ բացատրություններ պահանջել: Նա իրավունք չունի պատասխանել պաշտպանյալի փոխարեն կամ խոչնդոտել հարցաքննությանը:

- հարցաքննվողը և նրա դատապաշտպանը կարող են ընդհատել հարցաքննությունը (միայն մեկ անգամ) լրացուցիչ խորհրդատվության համար:
- Նույն կերպ հարցաքննվողն իրավունք ունի նոր փաստացի հանգամանքների որոշման հարցաքննության ժամանակ դիմել իր փաստաբանին կոնֆիդենցիալ խորհրդատվության համար: Նման խորհրդատվությունը պետք է տևի 15 րոպեից ոչ ավել:

Դ. Փաստաբանի հետ կոնֆիդենցիալ խորհրդատվությունից հրաժարվելը

Հարցաքննվողը պարտավոր չէ օգտվել պաշտպանի հետ կոնֆիդենցիալ խորհրդատվության իր իրավունքից:

Իր հայեցողությամբ հարցաքննվողը կարող է հրաժարվել իր այդ իրավունքից՝ նախապես լրջորեն խորհելով նման որոշման հետևանքների մասին, եթե.

- նա չափահաս է:
- նա անձամբ ստորագրել և նշել է ամսաթիվը նման իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթի տակ:
- հնարավորության դեքում հարցաքննությունը կարելի է ձայնագրել տեխնիկական միջոցներով: Տվյալ հարցը հարցաքննվողը կարող է քննարկել իր փաստաբանի հետ (տես նաև կետ 7):

Այս հարցը հարցաքննվողը կարող է քննարկել հեռախոսով կոլլեգիայի հերթապահ փաստաբաններից որևէ մեկի հետ:

Ե. Իրավունքներից զրկվելը

Բացառիկ կամ պարտադրող հանգամանքներում անառարկելի փաստարկների առկայության դեպքում գլխավոր դատախազը կամ քննիչը կարող է որոշում ընդունել կալանվածին զրկել հետաքննության ժամանակ կոնֆիդենցիալ խորհրդատվություն ստանալու իրավունքից կամ փաստաբանի օգնությունից: Նման որոշումը պետք է հիմնավորված լինի:

Զ. Ձերբակալության եվրոպական օրդեր տված երկրում փաստաբանի իրավունքները

Հարցաքննվողն իրավունք ունի փաստաբան ընտրել ձերբակալության եվրոպական օրդեր տված երկրում: Այդ փաստաբանը Բելգիայում հարցաքննվողի փաստաբանին կարող է արտահանձնման (էքստրադիցիայի) կարգի մասին տեղեկություններ և խորհուրդներ տալ:

**2. Ձերբակալության եվրոպական օրդերի կամ կողմնորոշման մասին տեղեկություններ**

- Հարցաքննվողն իրավունք ունի ձերբակալության եվրոպական օրդերի կամ կողմնորոշման էության մասին տեղեկություններ ստանալ:
- Եթե պատժի իրականացման նպատակով հարցաքննվողի արտահանձնման մասին դիմում է տրվել, իսկ հարցաքննվողին հայտնի չի եղել այդ մեղադրանքի կամ չավարտված քրեական պրոցեսի մասին, ապա հարցաքննվողն իրավունք ունի դիմել տեղեկանքի համար օտարերկրյա դատարանի վճռի պատճեի տրամադրման խնդրանքով, պայմանով, որ նման փաստաթուղթը տրամադրված կլինի ժամանակին:

**3. Ցուցմունքներ և բացատրություններ տալուց հրաժարվելու իրավունքը**

- Հարցաքննվողը պարտավոր չէ ցուցմունք տալ ինքն իր դեմ հարցաքննության և ոչ մի փուլում:
- Հարցաքննվողի անձը հաստատվելուց հետո նա իրավունք ունի ցուցմունքներ և բացատրություններ տալ, պատասխանել հարցերին կամ լռություն պահպանել:

**4. Իր կալանվելու մասին կալանվածի տեղեկացնելու իրավունքը**

Կալանվածն իրավունք ունի երրորդ անձին հայտնել իր կալանվելու մասին:

Այդուամենայնիվ, գլխավոր դատախազը կամ քննիչը կարող է որոշում ընդունել լիարժեք քննչական միջոցառումներ անցկացնելու համար հետաձգել կալանվածի այդ իրավունքի օգտագործումը:

## 5. Բժշկական օգնությունը

- Կալանվածն անվճար բուժօգնություն ստանալու իրավունք ունի:
- Կալանվածը նաև իրավունք ունի միջնորդել իր ընտրած բժշկի մոտ հետազոտվելու համար: Նման հետազոտությունն անցկացվում է կալանվածի հաշվին:

## Կալանվածի լրացուցիչ իրավունքները հարցաքննության ժամանակ

### 6. Այլ իրավունքները հարցաքննության ժամանակ

Հարցաքննության սկսվելուց առաջ քաղաքացուն հայտնում են որոշակի տեղեկություններ: Բացի փաստացի հանգամանքների հակիրճ շարադրանքից և հարցաքննվողին ցուցմունքներ և բացատրություններ տալուց հրաժարվելու իր իրավունքի մասին տեղեկացնելուց նրան պետք է հայտնեն, որ.

- նա իրավունք ունի պահանջել իրեն տրվող հարցերի և իր պատասխանների բառացի արձանագրում:
- նա իրավունք ունի պահանջել որոշակի հետաքննություն կամ կոնկրետ անձի հարցաքննություն:
- նրա ցուցմունքները կարող են օգտագործվել որպես դատարանի կողմից ընդունվող ապացույցներ:
- հարցաքննության ժամանակ հարցաքննվողն իրավունք ունի օգտագործել իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը, եթե դա հարցաքննության հետաձգման պատճառ չի հանդիսանա: Հարցաքննության ժամանակ կամ դրանից հետո քաղաքացին իրավունք ունի պահանջել, որ այդ փաստաթղթերը կցվեն համապատասխան արձանագրությանը կամ փոխանցվեն դատարանի գրասենյակ:

### 7. Հարցաքննության ֆիքսումը տեխնիկական միջոցներով

- Հնարավորության դեպքում, դիտարկման նպատակով հարցաքննությունը կարող է ֆիքսվել տեխնիկական միջոցներով:
- Այս հարցի վերաբերյալ որոշումը կայացնում է հարցաքննությունն անցկացնող անձը՝ դատախազը կամ քննիչը:

### 8. Հարցաքննության վերջում

Հարցաքննության վերջում ծանոթացման համար հարցաքննվողին տրվում է հարցաքննության արձանագրությունը: Հարցաքննվողը նաև իրավունք ունի խնդրել, որ իր համար կարդան արձանագրությունը:

Հարցաքննվողին հնարավորություն է տրվում իր տված ցուցմունքներում փոփոխություններ և լրացումներ մտցնել:

### 9. Թարգմանչի օգնությունը

- Եթե հարցաքննվողը չի հասկանում լեզուն կամ չի տիրապետում դրան, հարցաքննվողի մոտ լսողության կամ խոսելու խանգարումների առկայության պարագայում, ինչպես նաև, եթե փաստաբանը չի հասկանում լեզուն կամ չի տիրապետում դրան, հարցաքննվողն իրավունք ունի երդվյալ թարգմանչի օգնություն ստանալ փաստաբանի հետ կոնֆիդենցիալ խորհրդատվության ժամանակ: Նման օգնությունը կատարվում է անվճար:
- Եթե հարցաքննվողը որոշի ցուցմունքներ տալ մեկ այլ լեզվով, որը տվյալ գործի վարման լեզու չի հանդիսանում, ապա նա իրավունք ունի թարգմանչի օգնություն ստանալ: Նման օգնությունը կատարվում է անվճար:
- Հարցաքննվողին կարող են առաջարկել նաև իր լեզվով սեփական գրառումներ կատարել:

## 10. Արտահանձնման համաձայնություն տրամադրելը

Կալանվածը կարող է համաձայնվել արտահանձնմանը այն երկիր, որն իրեն հետախուզման է հայտարարել: Նա կարող է սահմանափակել իր համաձայնությունը այն օրինախախտումներով, որ նշված են ձերբակալության եվրոպական օրդերում: Նա կարող է նաև հրաժարվել կոնկրետության կանոնից, իսկ դա նշանակում է, որ արտահանձնումից հետո նա պատասխանատվության չի կանչվի կամ բանտ նստեցվի այլ հանցագործությունների համար, բացի նրանք, որոնց կապակցությամբ տրվել է արտահանձնման դիմումը կայացված դատավճռի իրականացման շրջանակներում:

Եթե կալանվածը ցանկանում է համաձայնվել արտահանձնմանը, ապա քննիչից հետո նրան կհարցաքննի դատախազը: Դատախազը կբացատրի նրան արտահանձնման հետևանքները: Կալանվածին կարող է օգնել փաստաբանը: Կալանվածը արտահանձնման համաձայնություն կարող է տալ միայն դատախազին:

Արտահանձնման իրավաբանական համաձայնությունը հետադարձ ուժ չունի:

## Կալանման ժամկետը

### 1. Որպես օրենք՝ 48 ժամ

Կալանման ժամկետը չի կարող գերազանցել 48 ժամը:

### 2. Քննիչը

- Կալանման 48 ժամյա հատվածում (որը կարող է երկարացվել ևս 24 ժամով) կալանվածը պետք է ազատ արձակվի կամ կանգնի քննիչի առջև: Վերջինս օժտված է ձերբակալության եվրոպական օրդերի համաձայն կալանելու իրավասությամբ:
- Քննիչը պարտավոր է կալանվածին առաջին հերթին քննել գործով: Հարցաքննության ժամանակ կալանվածը իրավունք ունի օգտվել իր փաստաբանի աջակցությունից: Քննիչը պարտավոր է լսել կալանվածի կամ նրա փաստաբանի բացատրություններն ու նկատողությունները ձերբակալության օրդեր գրելու հետ կապված:

Կալանվածը հնարավորություն ունի նաև հրաժարվել փաստաբանից, միայն եթե նա չափահաս է:

- Քննիչի կողմից ձերբակալության օրդեր գրելու դեպքում կալանվածն իրավունք ունի.
  - Անարգել շփվել իր փաստաբանի հետ:
  - Ձերբակալության օրդերի որոշումից հետո տասնհինգօրյա ժամկետում կանգնել դռնփակ դատական նիստի առաջ և բողոքարկել եվրոպական օրդերի համաձայն իր կալանման որոշումը: Նա կարող է բողոքարկել այդ որոշումը մեղադրական դատարանում, որը իր որոշումը պետք է կայացնի տասնհինգօրյա ժամկետում: Բողոքարկումը պետք է տալ դատարանի որոշումը իրեն

հանձնելուց պահից հետո 24 ժամվա ընթացքում:

- ծանոթանալ իր գործի հետ դռնփակ դատախոսից մեկ օր առաջ:
- գործի ապագա վարման կարգի վերաբերյալ փաստաբանից ստանալ լրացուցիչ տեղեկություններ:
- իր երկրի հյուպատոսություն հայտնել իր կալանման մասին, եթե կալանվածը տվյալ երկրի (Բելգիայի) քաղաքացի չէ:
- Եթե կալանվածը չի հասկանում ձերբակալության եվրոպական օրդերի լեզուն, կամ այն լեզուն, որով թարգմանված է օրդերը, ապա նրան պետք է տրվի ձերբակալության եվրոպական օրդերի թարգմանություն այն լեզվով, որը նա հասկանում է, կամ ձերբակալության եվրոպական օրդերի բանավոր թարգմանությունը, կամ գոյություն ունեցող գորընթացային գրառումների բանավոր թարգմանությունը նախքան դատական նիստը, ոչ ուշ, քան պատժի իրականացման մասին վերջնական որոշում կայացնելը:

**Իրավունքների պարզաբանման այս թերթիկը Դուք կարող եք պահել ձեզ մոտ:**